

4. Երգէ զբանս ուրախութեան վասն ցնծութեան մարդկան. Յակոբ ասցողս անսխտան, յիշման զիս առնէք արժան:

Ձեռագիրք. Քէշիշեան, Յուլ. Չմամուռ վանաց, Թ. 172, 48ա (ԺԷ): Ե. Վ. Սահա- կեան, Տաղարան Թ. 3, էջ 115—117:

Համեմատէ ասոր հետ «տաղն դարնան եւ ուրախութեան».

Ահա հոտըն դար դարնան. Իւր տեսն երեւի խընդման. Ձինչ կայ պաղչայ, պօստան, Ծաղկունք ամենայն բացուան...

ԺԳ. տունը կը սկսի.

Այսօր է մեզ տօն խընդման. Հաւասար սիրելեացդ որ կան...

Հ. Մ. Պոտուրեան այս տաղը, զոր կը հրատարակէ միւսանգամ²⁴, կ'ուզէ վերագրել Կոստ. Երզնկացւոյ: Երկու տաղերու մէջ նմանութեան դժեր կան. եթէ ստուգիլ Կոստանդին է վերջնոյս հեղինակը, պէտք է գՅա- կոր անոր ազդեցութեան տակ ենթադրել: Կ'արժէր նետարարնց Յակոբ եպիսկոպոսի այս տաղերը խնամով ի մի հաւաքել եւ հրատարակել:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



ԲԵԼՔԻՐ ԵՒ ՀՈՅԵՐԸ

Ե. ԳԼՈՒԽ

Մատթէոս Ուռնայեցի պատմիչը եւ իր դատողութիւնները Խաչակիրների վրայ: Երուսաղէմի հայ քաղաքիները: Գրիգոր վկայաւէր եւ Բարսեղ Ա. կաթողիկոսները: Գրիգոր ԺԳ. պապի գնահատականը:

Մեր հին պատմիչների մէջ Խաչակրական առաջին արշաւանքի պարագանների վրայ խօսել է Մատթէոս Ուռնայեցին, որ ժամանակակից էր եւ իր տարեգրութիւնները արձանագրել է մասամբ իբրեւ ականատես եւ մաս-

²⁴ Նախ լոյս տեսած Գ. Վ. Սրուանձաեանցի Մանանյի մէջ, էջ 277—279. ապա Կոստ. Երզնկացի, էջ 173—176:

ամբ իր լսածների հիման վրայ: Եւ որովհետեւ նա ընդարձակօրէն պատմում է Բելգիացի իշխանների գործերն, ուստի հարկ եմ համարում առանձնապէս կանգ առնել նրա պատմութեան վրայ:

Հին հայ մատենագիրների կեանքն եւ վարքը առ հասարակ քիչ է ծանօթ: Ուռնայեցու մասին էլ այսքան միայն գիտենք, ինչպէս ինքն է հաղորդում, որ ծնունդ է Եղեւսիցում եւ վանակացի էր, իր ապրած վանքի վանահայրը:

Ուռնայեցի իր ժամանակագրութիւնը սկսում է խաչակրութիւնից մօտ 1½ դար յառաջ, այն է 952ին եւ հասցնում է մինչեւ 1136: Մեռել է նա այդ թուականին, թէ ուրիշ պատճառով չէ շարունակել, որոշ չէ: Չամչեան նրա մահը դնում է 1144ին, Եղեւսիցի՝ մահմետականներից դրաման եւ հայերի կոտորածի ժամանակ¹: Յամենայն դէպս վերջիչեալ թուականից, 1136ից յետոյ, նրա գործը շարունակել է ոմն Գրիգոր Երէց, նոյնպէս հոգեւորական, թէեւ ոչ կրօնաւոր եւ բերում է մինչեւ 1162: Այս երէցը հաւանականաբար Մատթէոսի աշակերտն է եղած, որովհետեւ իրօգրութիւններն եւ մարդիկը դատում է նոյն եղանակով եւ լեզուն էլ նոյնպէս ուսմական գրաբար է եւ նոյն ոճով, ինչպէս Մատթէոսինը:

Ուռնայեցու բոլոր պատմածները հեռու են իրականութիւն լինելուց եւ իրաւունք ունի Ջարբճանէլեան նրան՝ «միամիտ եւ գիւրահաւան» կոչելու²:

Մատթէոս Ուռնայեցի իր պատմութեան առաջին մասում ի մէջ այլոց, շատ չահեկան տեղեկութիւններ է տալիս Ռուբինեան հարստութեան ծագման եւ սկզբնական գործունէութեան վրայ: Բուն խաչակրական շրջանի վրայ էլ այնպիսի մանրամասնութիւններ է պարունակում, որոնք ժամանակակից միւս, եւրոպացի կամ սիրիացի արաբ պատմիչների քով չկան:

Մատթէոս՝ Խաչակիրների Ս. Երկրի ազատութեան համար Եւրոպայից գալը, «Հոռմայեցուց ելք» է անուանում եւ համարում է կատարումն այն մարդարէութեան, որ արել է Մեծն Ներսէս կաթողիկոսը, «գորս վասն Հոռմայեցուց ելիցն խօսեցաւ ընդ նախարարան եւ ընդ իշխանան Հայոց աշխարհին»³:

¹ Պատմութիւն Հայոց, Գ. հատ., էջ 25:

² Պատմութիւն Հայ Գործութեան, էջ 663—664:

³ Յիշատակութիւններն առնում եմ Մատթէոս

Եւ նա այսպէս է նկարագրում այդ «Ելքը»: «Եւ ահա յայսմ ամի շարժեալ եղեւ ամենայն Իտալիա եւ Սպանիա մինչեւ յԱփրիկէա եւ խորին ազգն Պրանկաց, եւ դոհեալ անթիւ եւ անհամար եւ անազլին բազմութեամբ որպէս դմարախ որ ոչ թուի եւ կամ որպէս դաւազ ծովու որ ոչ քննի մտաց, եւ անաւոր մեծութեամբ եւ բարձրազահ իշխանութեամբ ելեալ գային իշխանքն աշխարհին Պրանկաց, եւ իւրաքանչիւր զօրօք գային յօգնութիւն քրիստոնէից եւ առ ի փրկել յայլազգեաց զսուրբ քաղաքն Երուսաղէմ, եւ ազատել ի Տաճկաց զսուրբ գերեզման աստուածընկալ, հաւարք փառաւորք եւ թագաւորազունք, հաւատով եւ ամենայն աստուածաշուտութեամբ զարդարեալք եւ էին սնեալք ի գործս բարութեան»:

Ապա յիշում է պետերի անունները. «Կոնդալիք, այր հօր, որ էր յազգէ թագաւորացն Հոռմայեցուց⁴ եւ նորին եղբայրն Պաղտիմի (Baldwin, Baudouin): Այս Կոնդալիք էր, «որ ունէր զհետ իւր զթագն եւ զթուրն Վեսպիանու թագաւորին»: Այնուհետեւ շարում է խաչակիր իշխանների անուններ՝ «Պեմունդ (Boëmund), Տանգրի (Tancrede), Չնճիլ (Saint Gille), այր ահարկու եւ փառաւոր, եւ Ռուպէրթ Նորմանաց կոմս (Robert comte de Normandie) եւ միւս այլ Պաղտիմի (Baldwin du Bourg), եւ կոմսն որ ասի Ճոսլին (Josslin) այր քաջ եւ հօր...: Գային եւ զհետ սոցա բազում եպիսկոպոսունք, քահանայք եւ սարկաւազունք...»: Կոպոսունք, քահանայք եւ սարկաւազունք...»:

Մատթէոս իր պատմութեան մէջ «Կոմսն մեր» է կոչում «Պաղտիմին», որի իշխանութեան տակ է գտնուել ինք Եղեւսիցում: Գրիգոր Երէց պատմում է թէ այս լատին կոմսն իրան խոստովանահայր է ընտրել մի հայ հոգեւորական, «Բարսեղ վարդապետն Հայոց»:

Եւրոպական աշխարհն առաջին անգամ ծանօթացաւ Ուռնայեցու պատմութեան, երբ Շահան Ջրպետ (Cirbied) Փրանսերէնի թարգմանեց նրա՝ յատկապէս խաչակիրներին հայող մասը, որին Silvestre de Sacy կցել էր իր ծանօթագրութիւնները⁵: Այս առաջին թարգմանութիւնից 40 տարի ետքը հայագէտ գաղղիացի զիտնականը Դիւլոուիէ՝ հրատարակեց Ուռ-

Ուռնայեցու Պատմութեան Երուսաղէմի հրատարակութիւնից, 1869ին:

⁴ Կոնդալիք է, այն է Գոդֆրուա՝ իրօք իր մեծ մօր կողմից, Մեծն Կարոլոս (Charlemagne) գաղղ. թագաւորից էր սերում, որ «Հոռմական կայսր» է կոչուած (800—814):

⁵ Notices et extraits des Manuscrits de la Bibliothèque Imperiale, Paris, Tome IX.

հայեցու ամբողջ պատմութիւնը, նրան կցելով նաեւ Գրիգոր Երէցի շարունակութիւնը⁶: Այս թանգարտէք գործը թարգմանիչը նուիրել էր Ռուսաց Ալեքսանդր Բ. կայսեր: Դիւլոուիէյի այս հրատարակութիւնը կարեւոր էր նրանով մանաւանդ, որ բազմաձևութեամբ մանիչը բանասիրական-պատմական բազմաթիւ հմտալից ծանօթութիւններ էր կցել իր թարգմանութեանը: Այս աշխատութիւնը մեծապէս գնահատուած է հայ հեղինակների կողմից: Երուսաղէմի տարգրութեան հրատարակիչը «Հանճարասէր քննութիւն» է անուանում, թէեւ տեղ տեղ ուղղումներ է կատարել նրա ծանօթագրութիւնների մէջ:

Այնուհետեւ Բելգիացի հայագէտ Պրոֆ. Ֆէլիքս Նէվ, գաղղիերէն լեզուով հրատարակել է Մատթէոս Ուռնայեցու պատմութեան այն էջերն, որոնց մէջ հայ ժամանակակից պատմիչը խօսում է յատկապէս Խաչակրութեան այս առաջին շրջանի Բելգիացի պետերի մասին⁷:

Ուռնայեցին ընդհանրապէս շատ գոհ է քրիստոնեայ եւրոպացիների արշաւանքից այլազգիների դէմ եւ նուիրական է համարում նրանց Ս. Երկիրն ազատելու նպատակը: Բայց Խաչակիրների եւ տեղացի հայերի յաճախակի շփոթների ժամանակ, երբեմն նրանց մէջ էլ անհաճոյ դէպքեր եւ նոյն իսկ ծանր ընդհանրուներ են տեղի ունեցել եւ Մատթէոս այսպիսի պարագաններում դառն լեզու է գործածում Խաչակիրների դէմ եւ նոյն իսկ ուրախանում է, որ սրանք պարտութիւն են կրում մահմետականներից: Դիւլոուիէ այսպէս է բացատրում այդ հայ-լատինական ընդհանրաները, արդարացնելով Մատթէոսի դանդաղաները:

«Պրանկներն, ասում է նա, իրենց սուարի եւ կողոպուտի բնազդով եւ այն փառասիրական ոգւով, որ միացած էր նրանց միամիտ բարեպաշտութեանը, երբեմն ձերբակալել են նաեւ հայ պետեր եւ կեղեքել շատ դաւառներ, օտար աշխարհականների պէս: Այս բռնութիւնների, ինչպէս եւ իր հայրենիքի դժբախտութիւնների յիշատակը՝ մեր ժամանակատիւնների յիշատակը են դառն խօսքեր զրին (Ուռնայեցուն) ստիպել են դառն խօսքեր

⁶ Chronique de Mathieu d'Edesse (962—1136) avec la continuation de Gregoire le Prêtre jusqu'en 1162, par Edouard Dulaurier, professeur à l'École Impériale des langues Orientales vivantes, Paris 1858.

⁷ Felix Nève, Les chefs belges de la Première Croisade, d'après les historiens arméniens, Bruxelles 1857.

կալուածս, ընդ որ կարի իմն հաճեալ Բարսղի՝ կամեցաւ բնակել անդ առ Ժամանակ մի»¹¹։

Շատ աւելի կարեւոր անձնաւորութիւն էր այս Բարսղի նախորդը, Գրիգոր վկայասէր։ Այս մեծ հայրապետն, աւելի իրաւամբ պէտք էր խաղաղասէր կոչուիլ, որովհետեւ իր ամբողջ պաշտօնավարութեան ժամանակ եռանդով նուիրուած էր՝ իր Ազգն ու Եկեղեցին հանելու այն մեկուսացեալ դիրքից, որի մէջ գտնուած էին, այլացեղ եւ այլակրօն թշնամիներից շրջապատուած եւ հաշտեցնելու ուրիշ մեծ քրիստոնէայ ազգերի եւ եկեղեցիների հետ։ Գրիգոր Մագիստրոսի այս արժանաւոր սրբին, չբաւականանալով գրաբարութեամբ կամ այս նպատակին ուղղուած նամակներէ փոխանակութեամբ, յանձն էր առել ճանապարհորդել թէ՛ Արեւմուտք եւ թէ՛ Արեւելք եւ անձամբ տեսակցիլ այս մասին եկեղեցական եւ աշխարհական քրիստոնէայ պետերի հետ։ Նա նախ զնացել է Հոտմ 1075ին ուր Պետրոս Առաքեալի գերեզմանի վրայ իր ուխտը կատարելուց յետոյ, մեծ պատիւներով ընդունուել է Գրիգոր Է. պապի կողմից եւ «քերան ի քերան խօսեցեալ ընդ նմա ի վերայ կրօնից եւ ծիսից հայոց, հանեցոյց զմիտս նորա» գրում է Չամչեան։ Բայց այս բաւական չէր պէտք էր յունական եկեղեցու պետի միտքն էլ «հաճեցնել»։ Եւ խաղաղասէր կաթողիկոսը 1083ին գնում է Կ. Պոլիս։ Այն դարում Բիւզանդիոյ կայսրը, շատ մեծ ձայն ունէր եկեղեցական խնդիրներում. ուստի Գրիգոր վկայասէր՝ մեծ ջանք է դործ դրել նրան համոզելու համար։ Նա խնդրել է կայսրից ըստ Չամչեանի, «զի փոխանակ հալածելոյ գեայս, միաբանեցուցէ գնոսա ընդ յոյնս, սիրով»։ Դժբախտաբար Կ. Պոլսում նա չէ գտել իր ակնկալած ընդունելութիւնն, ինչպէս ունեցել էր Հոտմում, որովհետեւ բիւզանդացիք քաղաքական-աշխարհակալական ձգտում եւ նպատակ ունէին այն տեղերի վրայ, ուր Ռոմիներն իշխանապետութիւնն սկսել էր հիմնուել եւ հետզհետէ տարածուիլ։ Այնուհետեւ Գրիգոր Մագիստրոսը երկրորդ անգամ եկաւ Երուսաղէմ, Քրիստոսի Գերեզմանին այցելութեան, անշուշտ երկնաւոր միջամտութիւն հայցելու իր սիրած Եկեղեցոյ եւ Ազգի համար։ Այս միջոցին էր, որ Երուսաղէմ պաշարուեց խաչակիրներից։ Մատթէոս Ուռհայեցու վկայութեան համաձայն, նրա կեանքը

մեծապէս վտանգի տակ էր, երբ Բելգիացի Գողթրուան քաղաքը գրաւելով նրան ստոյգ մահուանից ազատեց։ Այլեւս իր խաղաղասիրական դերը կատարած նկատելով, Գրիգոր քաջուեց Արիզի վանքը, Տաւրոսի ստորոտում, եւ անձնատուր եղաւ մինչեւ իր մահը (1105ին, ընտրուած էր 1065ին), իր սիրած գրական աշխատութիւններին, աշակից ունենալով հայագէտ Թէոփիլասէ յոյն իմաստասէրին։ «Ժողովելով, ասում է Չամչեան, արս իմաստունս եւ բանիբունս յազգէ իւրմէ եւ յազգէ յունաց եւ ասորոց, ի ձեռն նոցա անդադար պարապէր ի թարգմանութիւն զանազան գրոց, մանաւանդ վարուց Սրբոց»¹²։ Ահա այս գործի, այսինքն մի քանի սուրբերի վկայարանութիւնները գրելու եւ գրել տալու եւ նրանց տօները հաստատելու յիշատակն էր որ պահպանուել է գլխաւորաբար եւ նրա «Վկայասէր» արտոգոսին առիթ դարձել։ Բայց Շնորհալին աւելի փառաւոր տիրոջն է ստուած նրան երբ երգում է նրա մասին՝

«Երկրորդ Մեսրոպ մեզ երեւեալ»։ Իսկ Մ. Ուռհայեցին նրան մինչեւ իսկ Յովհ. Մկրտիչին եւ Եղիա Մարգարէին է նմանեցնում¹³։

Այստեղ վերջ տանք խաչակիրութեան շրջանի պատմութեան, յառաջ բերելով մի լիովին հեղինակաւոր անձնաւորութեան գնահատականն, այն կարեւոր դերի մասին, որ կատարել են հայերը այն ժամանակ։

Սօսքը թողնենք դարձեալ մեր ձեռնհաս պատմագրին.

«Չայս գործ հայոց, գրում է Չամչեան, բազում գրուատանօք յիչէ եւ սրբազան պապն Գրիգոր ԺԳ., այն, որ նորոգեաց զՏոմարն Հոտմայեցոց, քանզի դրէ ի կոնդակի իւրում զոր արար վասն Հայոց յամի 1584, այսպէս. «Բացի բազմադիմի երախտեաց, զոր եցոյց ազգդ այդ առ եկեղեցի եւ առ քրիստոսական ժողովուրդ, արժանի անմոռաց յիշատակի՝ մեծ եւս է այն գործ, զոր արարին հայք ի գնալ իշխանաց եւ զօրաց քրիստոնէից բազում անգամ յառումն Ս. Երկրին. զի ոչ այլ ազգք եւ ոչ այլ ժողովուրդք այնպէս յօժարալիտ եւ գուարթագին զանձինս ըմայեցուցին ի սատար օգնականութեան որպէս հայք, որք զօրօք եւ երկվարօք, զինուք եւ թռչակօք, խոր-

¹² Չամչեան, Պատմ. Հայոց, Բ. հատ., էջ 1000 եւ Գ. հատ., էջ 8 եւ 20:
¹³ Ուռհայեցին ի մէջ այլոց պատմում է, որ Գրիգոր այցելել է նաեւ Եգիպտոս, ուր իր ժամանակ 30.000 հայ կայ եղել։

¹¹ Չամչեան, Գ. հատ., էջ 25:

հրդով եւ ամենայն նպատուք ձեռնտու եւ զօրավիգն եղին քաջութեամբ եւ հաւատարմութեամբ առ քրիստոնէայս յայնմ մեծի եւ կարեւոր պատերազմի»¹⁴։

Զ. ԳԼՈՒԽ

Միջագային առուտուրը Փոքր Ասիայում։ Հայոց մրցումը։ Հայկական Այսա Նաւահանգիստն եւ իր կանոնները։ Կիլիկիոյ քաղաքների հրովարտակները։ Համբաւաւոր Մարկո Պոլօյի ուղեւորութիւնն եւ Այսա գալը։ Մարկո Պոլօյի դիտողութիւնները ԺԳ. դարի Հայոց մասին։ Վենետիկցիների եւ ջեմուպացիների նաւային պատերազմը Այսաի առջեւ։

Եւրոպայի եւ Հայակիլիկիոյի մէջ առեւտրական յարաբերութիւնները սկսել են մշատուել ժԱ. դարում եւ հետզհետէ զարգացել են։ Այս ժամանակամիջոցում, խաչակիր ասպետներ չէին միայն՝ Կիլիկիոյի ծովեզերքն պետներ չէին միայն՝ Կիլիկիոյի եւ նրանցից եկողները։ Նրանց հետ միասին եւ նրանցից յետոյ բազմաթիւ Եւրոպացի նաւազնացներ եւ առեւտրականներ օգտուել են առթից եւ մեծ գործունէութիւնն ցոյց տուել։ Քրիստոնէագործունէութիւնն ցոյց տուել է ներքին՝ Փոքր Ասիոյ զանազան մասերում եւ հակառակ եւրոպական իշխանապետութիւններ հիմնելը գլխաւոր ազգակն է եղած այս ձեռնարկութիւնները ծաղկելուն։

Այս դարերում, ոչ միայն Փոքր Ասիայի այլ եւ կենդրոնական Ասիայի եւ նոյն իսկ ծայրագոյն Արեւելքի հետ առեւտրական յարաբերութիւններ տեղի էին ունենում Միջերկրականի ասիական ծովեզերքի միջոցով։ Փոքր Ասիոյ եւ Միջագետքի գլխաւոր քաղաքներում, ինչպէս Հալէպ, Դամասկոս, Բաղդադ եւ Մուսուլ, տօնապաճատներ էին սարքում ասպետները միջերկրական, վաճառման եւ փոխանակութեան համար։ Իսկ ծայրագոյն Արեւելքից՝ ասպետները բերում էին Կարմիր ծովով Արիւս եւ Ազէն նաւահանգիստներն եւ այնտեղից ցամաքային կարաւաններով փոխադրում Միջերկրականի ծովեզերքը։ Միջերկրականի էին հաստատուել յատկապէս Միջերկրականի այն նաւահանգիստներում, որոնք ամէնից աւելի մերձաւոր յարաբերութիւններ ունէին եւրոպական ծովեզերքի հետ, այն է Տիւրոս,

¹⁴ Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ. հատոր, էջ 19:

Աքիւս, Բէյրութ եւ Տրիպոլի։ Միջերկրածառիկան եւ առ հասարակ արեւելեան ապրանքներն էին՝ չինական յարսնապակի, գորգեր, մուշտակ, մարգարիտ, մետաքս, հոտաւէր իւղեր եւ այլն։ Բացի դրանից յատուկ գործարաններ էին հիմնուել արեւելեան հում նիւթերից եւրոպական ճաշակի յարմար իրեր պատրաստել։ Այսպիսի գործարաններ կային մանաւանդ հետեւեալ տեղերում՝ Անտիօքում եւ Տրիպոլիում մետաքսեղէն գործուածքների համար, Երուսաղէմում ոսկերչական իրերի, Տիւրոսում շաքարեղէնի, Հերոնում ապակեղէնի եւ այլն։ Երբ իտալական եւ բելգիական նաւահանգիստներից նաւեր էին գալիս, խաչակիրների համար օգնական խումբեր բերելով կամ Փոքր Ասիայում հաստատուած եւրոպական գաղութներին՝ եւրոպական գործարանական արդիւնք մատակարարում, այս միեւնոյն նաւերը վերադարձին տանում էին վերոյիշեալ միջերկրացիներում ամբարուած կամ գործարաններում պատրաստուած նոր ձեւի ապրանքներ։

Այս դարերում, Միջերկրականի ծովեզերքի առուտուրը Վենետիկի, Պիզայի եւ Ջենովայի ձեռքումն էր. փոքր չափով միայն մասնակցում էր Մարսիլիան։ Բայց այս միջագային առեւտրի մէջ «հայերը շատ լուրջ մրցակիցներ դարձան» նրանց, գրում է գաղղիացի մի պատմագիր¹։ Հայերի առեւտրի գլխաւոր առարկաներն, որոնք կամ ուղղակի կամ իտալացիների միջոցով Եւրոպա կը ներմուծուէին՝ հետեւեալն էին՝ բուրդ, բամբակ, փոքր Հայքի հանքերից ստացուած պղինձ ու երկաթ, գինի, չամիչ եւ ամէն տեսակ կենդանիներ՝ ձի, ջորի, էջ, ուղտ, այծ, գոմէջ եւ այլն եւ նրանց կաշին ու մազեղէնը։ Սակայն հայ վաճառականների ամէնից աւելի մեծ ձեռնարկը մետաքսի առուտուրն էր։ Եւ գարմանալի չէ այս։ Դեռեւս Թ. եւ Ժ. դարերում, մետաքսեղէնն այնչափ առատ է եղել Հայոց քով, որ նոյն իսկ հասարակ մարդիկ մետաքսէ հագուստ են ունեցել։ «Մինչեւ հօվուաց եւ անդէորդաց մետաքսայս զգեհուլ պատմուծան» վկայում է Ասողիկ (Գ. դ.)։

Հայկական առեւտրի ամենամեծ շուկան այն ժամանակ, ժԱ. դարում, Արծն քաղաքն էր, կարնոյ դաշտում, «հոչակաւոր եւ բազմաբոս քաղաք Հայոց» գրում է Ուռհայեցին, որի ասելով մինչեւ 150.000 հոգի բնակչութիւն է

¹ Ferd. Chalandon, Histoire de la Première Croisade, Paris 1929, էջ 359:

ունեցել եւ 800 եկեղեցի: Իսկ վաճառականները հարստութիւնը եղել է «անհամար չափս ոսկւոյ եւ արծաթոյ եւ զգլխակաց»: Բայց այս վաճառականներն երբեք անտարբեր չեն մնացել իրենց երկրի ազգի եւ եկեղեցոյ կարիքները հանդէպ. «վաճառականք, գրում է Արիստակէս Լաստիվերտացին, եկեղեցոյ շինողք եւ զարդարիչք, կրօնաւորաց օթեւանք եւ հանգուցիչք, առ աղքատս ողորմածք եւ զարմանիչք... եւ օգնողք թաղաւորաց»:

Կիրիկիայի միջոցով կատարուում էր մի ուրիշ առուծախք, որ բարեբախտաբար՝ ոչ հայկական ապրանք էր եւ ոչ էլ հայի ձեռնարկութիւն: Կովկասից բերում էին գերիներ եւ գերուհիներ եւ այնտեղ ծախում Եգիպտոսի համար, հայկական դրամով: Գերին կ'արժէր 200 հայկական դրամ, իսկ գերուհին՝ կրկինը՝ 400:

Բելգիացիք, յատկապէս Փլամանները՝ ԺԱ. դարի երկրորդ կէսից յետոյ են սկսել երեւալ Միջերկրականում իբրեւ ծովագնացներ:

Մի հետաքրքրական դէպք է պատահել այս բելգիացիները հետ Կիրիկիայի ծովեզերքում, ԺԲ. դարում: Տասը առագաստանաւ, մի ճարպիկ Փլաման նաւապետի ղեկավարութեան տակ, գտել են, որ աւելի ձեռնտու է օտար ապրանքն ուղղակի առնելը քան թէ իրենց ապրանքի հետ փոխանակելը, եւ սկսել են ծովահնութիւն անել: Նրանք՝ իրենց հանդիպած օտար նաւերը՝ փորձուած ծովասոյզների ձեռքով ծակում էին յատակից եւ երբ այս պատճառով օտար նաւագնացների մէջ շփոթութիւն էր ծագում, Փլամաններն օղաւում էին հանգամանքից, յարձակում, գրաւում եւ կողոպտում էին: Նրանք շուտով յայտնի են դարձել ամբողջ Միջերկրականում իբրեւ «կանաչ ծովահններ»: Մի անգամ, իրենց գործն այսպէս շարունակելով նրանք եկել են մինչեւ Տարսոն, որպէս զի այնտեղ իրենց աւարը ծախեն կամ փոխանակեն, երբ յանկարծ ամենամեծ զարմանքով տեսնում են, որ Տարսոնի պարսպի վրայ իրենց ազգային, Յլանդրական դրօշակն է ծածանում: Գողժրուայի եղբայր Բողուէնն էր այնտեղ, որ նոր եկել գրաւել էր Տարսոնը: Ծովահն Յլամանների ուրախութիւնն անասհման է լինում իրենց հայրենակիցներին պատահելով: Բայց Բողուէն նրանց համոզել է, որ ծովահնութիւնն անվայել է իրենց. ուստի Յլամանները թողել են այս արհեստն եւ Պաշակիր գրուելով «արժանաւոր

կերպով իրենց կեանքն վերջացրին» ասում է Բելգիացի պատմիչը²:

Մերձաւոր Արեւելքի հետ այս առեւտրական յարաբերութիւնը Եւրոպայի տնտեսական կեանքի համար մի կարեւոր տարր դարձաւ, որ սկսել էր խաչակրութիւնների պատճառով եւ Պաշակիրութեան դանդաղացման հիմնական պատճառներից մէկը պիտի դառնար: Արեւելքի այն դարի փայլուն քաղաքակրթութիւնը՝ բոլորովին նորութիւն էր քրիստոնեաների համար, կատարելապէս տարբեր այն նեղ եւ միօրինակ կենցաղավարութիւնից, որոնց սրանք սովոր էին Արեւմուտքի իրենց զգեստներում: Այս արեւելեան նոր կեանքը շուտով դարձեց նրանց: Արեւելեան զգեստն, իր մեծ ծաւալովն աւելի յարմար երեւաց, մանաւանդ տեղական կլիմայի համար, քան իրենց սովորական ազգային հագուստը. նրանք իրենց գլխարկի վրայ փաթթեցին արարական Բուֆիլէն, որ պաշտպանում էր արեւի դէմ. նրանք ընտելացան արեւելեան նուրբ կերակուրներին³:

Ասորիքում եւ Պաղեստինում ոչ միայն եւրոպացի, այլ եւ տեղացի ժողովրդի հալուստ դասակարգը ապրում էր Աֆեայում (նախկին Ptolemais): «Այստեղ ապրում էին, երկնքի տակ զտնուող ամենահարուստ վաճառականները, աշխարհիս բոլոր ազգերի անգամները: Ապրում էին այստեղ ի մէջ այլոց պիղապցիներ, ջինովացիներ եւ լոմբարդացիներ, որոնց՝ իրարու հետ ունեցած անիծեալ զժտութիւնները պատճառ դարձան Աքեայի կործանման...: Արեւածագից մինչեւ արեւամուտքը, տիեզերքի ամէն ծայրից ամէն տեսակ ապրանք էին բերում այստեղ, ինչ որ կար ամենաթանգ եւ ամենահազուագիւտ, որովհետեւ այստեղ բնակւում էին իշխաններ եւ մեծամեծներ...»⁴:

ԺԱ. դարից սկսած Փոքր Հայքի բնակչութիւնը եւ մանաւանդ նրա պետերը ձգտում էին դէպի ծով: Օտար երկիրների հետ անմիջական, ապահով եւ անընդհատ յարաբերութիւններ ուննալու համար անհրաժեշտ էր ծովեզերքի տէր դառնալ: Ռուբինեանները լաւ էին հասկացել այս կէտն եւ նրանք հասան իրենց նպատակին: Այնուհետեւ է, որ երկիրը

² Vanden Bussche, La Flandre, 1878, էջ 56:
³ Louis Brehier, L'Eglise et l'Orient au Moyen Age, Paris 1907, էջ 99:
⁴ G. Schlumberger, Byzance et Croisades, Paris 1927, էջ 219: Հեղինակն այս տողերը քաղել է մի գերմանացի ճանապարհորդի պատմութիւնից, որ ԺԳ. դարի առաջին կէսին այցելել է Աքեայի աւերակներն եւ նկարագրում է, սկանառեսներից լսելով:

նախ Հայակիրիկիա (Armeno-Cilicie) կոչուելուց յետոյ կամ գուցէ եւ միաժամանակ, ուղղակի Armenia եւ Terra Armeniorum սկսեց կոչուել եւրոպացիներից: Իսկ արարները «Կիրիկիա» կոչումը բոլորովին բաց թողնելով Հայաստան կամ աւելի ճիշդը՝ «Հայկական երկիր կամ քաղաքներ» (Բիլադ-ուլ-էրմէն) սկսան անուանել:

Միայն ծովեզերք ունենալը բաւական չէր. պէտք էր յարմար ցաւահանգիստ ունենալ: Այդ նաւահանգիստն եղաւ՝ Այասը: Կիրիկիայի ծովեզերքի վրայ կային ուրիշ փոքրիկ վայրեր, ուր մօտենում էին օտար առագաստաւորներ, ուր մօտենում էին օտար առագաստաւորներ եւ մեկնում էին այնտեղից: Դրանց ոչ նաւեր եւ մեկնում էին այնտեղից: Հեմէլը չունէր Այասի առաւելութիւնները: Հեմէլը Ա.ին ենք պարտական, որ Այաս դարձաւ կատարեալ նաւահանգիստ եւ դրաւ իր վրայ բոլոր Եւրոպայի նաւագնացների եւ առեւտրականների ուղարկութիւնը: Այսպէս Հայոց Պատմութեան մէջ կարեւոր է, իբրեւ միակ հայկական նաւահանգիստը, ուստի արժէ նրա մասին մանրամասն խօսիլ:

Այսպէս ունէր արդէն իր պատմական անցեալը: Նա յայտնի էր հռոմէական աշխարհին Aegae իսկ յունականին Egea (գաղղ. Egee) կոչոււմերով: Այս նախկին պատմական ծովեզերայի փոքր քաղաքը 7 դար անց յայտնութեան մէջ մնալուց յետոյ, նորից վերակենդանացաւ շնորհիւ Կիրիկիոյ հայ իշխանապետութեան: Իտալացի նաւագնացներն սկսան կոչել այնուհետեւ՝ Portus Ayacii, Domini Regis Ermenie, ինչպէս յիշուած է Ջենովինի պաշտօնական արձանագրութիւնների վայրի պաշտօնական արձանագրութիւնների մէջ: Այս նոր «Regis Ermenie» (Հայաստանի թագաւորութեան) մայրաքաղաքը Միան էր, բայց բարախող սիրտը Այասն է եղած: Հ.Ալիբայց բարախող սիրտը Այասն է եղած: Հ.Ալիբայցի պատմութիւնները՝ Սիսական եւ Սիսուան է կոչել, իբրեւ Միսից կախում ունեցող, հրապուրուելով Գրիգոր Տղայ կաթողիկոսի միջերթումից, որտեղ Կիրիկեան Սիսական է կոչուած:

Երբ Եգիպտացիք 1268ին գրաւեցին Անտիոքն եւ ապա 1291ին նաեւ Աքեան (Saint Jean d'Acre), հայկական Այասը Միջերկրականի ասիական ծովեզերքի ամէնից կարեւոր եւ բանուկ նաւահանգիստը դարձաւ եւ այսպէս մնաց մինչեւ ԺԳ. դարի կէսը: Ժամանակի Եւրոպական մատենագրութեան մէջ նա կոչուած է Ajazzo, Lajazzo եւ Lascaso:

Ամէնից յառաջ Վենետիկցիք են եկել

Այսպէս բայց նրանց անմիջապէս հետեւել են Բելգիացիք, որոնք գալիս էին Բրիւս կամ Բրիւզզէ նաւահանգստից, որի մասին ընդարձակօրէն պիտի խօսիմ յաջորդ Գլխում:

Հետզհետէ Այաս են երթեւեկել Միջերկրականի ծովեզերքի բոլոր նաւագնացները, յոյներ, սպանիացիք, գաղղիացիք եւայլն: Մրանց բոլորի նպատակն էր իրենց երկրի գործարանական արդիւնքներն եւ այլ եւրոպական գործուածքներ Այասի միջոցով վաճառել փոքր Ասիոյ ներքին շուկաներում: Երբ այս կերպով Եւրոպայի վաճառականներ հիմնաւորապէս հասնատուել են Այասում, նրանց կառավարութիւններն էլ հիւպատոսներ են նշանակել, իրենց հպատակների շահերը պաշտպանելու համար: Այս հիւպատոս — consul պանելու համար: Այս հիւպատոս — consul բառն է, որ Կիրիկիոյ այն ժամանակի լեզուի մէջ դարձել է «գունց»:

Այսպէս հաստատուած էր յատուկ արքայական տեսան, որ տեղ արձանագրում էին բոլոր առեւտրական գործողութիւնները Եւրոպացիների եւ Հայոց մէջ:

Այս պաշտօնատեղին Եւրոպացիք կոչել են Curia Regis Armeniae: Նա երկու ճիւղի էր բաժնուած, նայելով գործառնութիւնների տեսակին: Այնտեղ բացի արքունի հայ պաշտօնականներից կային յատուկ թարգմաններ՝ մանաւանդ լատիներէնի համար, որ գործառնութիւնների պաշտօնական լեզու էր բոլոր եւրոպացիների համար, իբրեւ այն դարի ամէնից տարածուած գրական լեզուն: Կային թարգմաններ նաեւ իտալերէնի, գաղղիերէնի, արաբերէնի եւ ուրիշ լեզուների համար:

Այսպէս կար հայկական մահաւտուն, որ կոչուում էր Բաթ-տուն: Լատիներէն գրուած կամ լատիներէնի թարգմանուած հայ արքունի հրովարտականներում այս բառը լատինականի է վերածուել Pasidonium կամ Pacistonium ձեւի տակ: Եւ այս Բաթ-տունը այնքան եկամուտ է ունեցել որ նրա հասոյթով հայկական պետական ծախքերի մեծ մասն է հոգացուել, որ անշուշտ շատ կարեւոր եկամուտ է, քանի որ եւրոպացի վաճառականներ, առանձնապէս Ջենովացիք, Վենետիկցիք եւ Ֆիորենցիացիք մեծ արտօնութիւններ էին վայելում սուրբ կողմից, արքունի հրովարտականներով շնորհուած: Այս հրովարտականները մեծ մասամբ պահպանուած եւ հրատարակուած են, թէեւ ցիրուցան եւ զանազան տեղեր: Շահեկան է ի մէջ այլոց Վ. Լանգլուայի ժողովա-

Գրքի XIX եւ XXI Գլուխները նուիրում է Հայաստանի կացութեան: Ես յառաջ կը բերեմ միայն այն Գլուխն, որ տեղ խօսում է Փոքր Հայքի Կիլիկիայի մասին, որովհետեւ սա միայն կապ ունի մեր պատմութեան հետ:

«Ճիշդ է, որ երկու Հայաստան գոյութիւն ունի, Մեծ եւ Փոքր: Փոքր Հայաստանի (Կիլիկիան է ակնարկում) քաղաքը իր երկիրը կառավարում է արդարութեամբ: Նա ենթարկում է թաթարներին: Ծառ քաղաքներ եւ գրեականներ կան այնտեղ եւ ամէն բանի մեծ առատութիւն է տիրում: Այս երկիրը շատ յարմար է վայրենի անասունների եւ թռչունների որսորդութեան համար: Բայց ձեզ այն էլ ասեմ, որ երկիրը առողջապահական վայր է: Հին ժամանակ այս երկրի ազնուականները նշանաւոր էին իրենց զինուորական գործերովը եւ քաջութեամբը: Բայց հիմայ ողորմելի են եւ վատագի (vil) . ամենեւին քաջարտութիւն չունին. լաւ խմորներ են միայն: Ծովեզերքում մի քաղաք կայ, որ Լայաս (Layas) է կոչւում, որ մեծ առեւտրի տեղ է: Իմացէք, որ բոլոր համեմները, ասուեղէնները, ոսկեղէն իրերն եւ ուրիշ ապրանքներ բերում են այստեղ ներսերից. իսկ Վենետիկի, Ջենովայի եւ ուրիշ երկիրների վաճառականներ գալիս են, ծախում են իրենց բերած ապրանքներն եւ գնում, տանում են ինչ որ իրենց պէտք է: Ով որ ուզէ երկրի ներսերը գնալ, վաճառական թէ ուրիշ ուղեւոր պէտք է որ այս քաղաքից անցնի» (էջ 33) 8:

Հետաքրքրական է այս երկար ուղեւորութեան վախճանը: Մարկո Պոլո տասնեակ տարիներ վերջը դարձեալ եկել է Այս այս անգամ այնտեղ կուտելու համար: Այս դէպքը հետեւեալ կերպով է նկարագրուած նրա գրքում: Մարկո Պոլո 26 տարի Արեւելքում ճանապարհորդելուց յետոյ, վերադարձել էր Վենետիկ այնպիսի հազուատուով, դէմքով եւ նոյն իսկ խօսուածքով, որ իր հայրենակիցները չեն ճանաչել նրան: Բոլորն էլ նրան մեռած էին կարծում եւ նոյն իսկ նրա հօրենական տունն անցել էր ուրիշ ժառանգների ձեռքը: Ծառ ժամանակ է հարկ եղել, մինչեւ որ ամէն ինչ կարգի մտնէ: Վենետիկցիք երբ տեսել են թէ Մարկոն, իր հայրն ու հօրեղ-

բայրը մեծ քանակութեամբ դոհարեղէն են բերել Արեւելքից, իրենց հազուատուողէնի մէջ կարուած, նրանց տրամադրութիւնն էլ վտտուել է...: Մարկոն այնուհետեւ կոչուել է Marco Millioni:

Այն դարերում, Վենետիկի եւ Ջենովայի հասարակապետութիւնները շարունակ մրցման մէջ էին, եւ ամէն կերպ աշխատում էին իրար միջասել, մանաւանդ նաւագնացութեան եւ միջադպրային առևտրի մէջ: Մարկոյի դարձից քիչ վերջը Ջենովացիների նաւատորմի ղեկավար Մարկոն ծովեզերքի վրայ սկսել է սպառնալ Վենետիկցիներին: Վենետիկի հասարակապետութիւնն էլ իր կողմից ռազմական եւ պատրաստել, նրանց դիմադրելու համար: Մարկոյի մէջ զարթել է հայրենասիրական սղին եւ նա իր սեպհական ռազմանաւով միանում է Վենետիկեան նաւատորմի ղեկին, Ջենովացիների դէմ կուտելու համար: Երկու թշնամի նաւատորմիները բաց ծովում միմեանց հալածելով վերջ ի վերջոյ երկուսն էլ գալիս են... Այսա եւ հայկական նաւահանգիստը 1296ին նաւային մեծ պատերազմի գալա է հանդիսանում: Յաղթանակը մնում է Ջենովացիներին, որոնք 25 Վենետիկեան նաւ կործանում եւ դերում են, որոնց մէջ էլ ինչուստ նաեւ Մարկոյի սեպհական նաւը: Մեր համբաւաւոր ճանապարհորդն ինքն էլ դերի է ընկնում: Ջենովացիները բերում են նրան Ջենովա եւ բանտարկում: Մարկո Պոլոյի անունն արդէն այնքան տարածուած էր Եւրոպայում, որ երկու տարի շարունակ ամէն կողմից գալիս այցելում են նրան իր բանտում, որ նրա բերանից լսեն իր անօրինակ ուղեւորութեան արկածները: Այդ պատճառով, այն էլ միւսերոյն բանը անդադար չկրկնելու համար, Մարկո որոշել է թեւադրել եւ գրել տալ իր ճանապարհորդութիւնը: Պիղաքի ոմն Բիւստիսիէն, գրի է առել, որից յետոյ ուրիշներն ընդօրինակելով տարածել են: Այդ սկզբնական բնագրի վերնագիրն է եղել՝ Livres des diversités et merveilles du monde:

Մարկո Պոլո 4 տարի բանտում մնալուց յետոյ, վերջապէս շնորհիւ իր մեծ համբաւին

8 Հեթում պատմիչ՝ Այասի առջև սյուպիսի մի նաւային պատերազմի նկարագրութիւնն է տալիս, որ տեղի է ունեցել 2 Յունիս 1293ին: Ջենովացիները 12 ռազմանաւով (Galere) յարձակուել են վենետիկցիների 32 նաւերի վրայ որոնց 24ը դերի են վերցրել: Այս պատմութեան վրէժը լուծելու համար վենետիկցիներն էլ մի քանի տարի վերջը Ջենովացիների դրասնեակներն են կործանել:

8 Ուշագրութեան արժանի են օտար, անկողմնակալ ականաւետի այս տողերը (ստորագրումը մերն է), հայ երկրի եւ ազնուականների այն ժամանակի կացութեան եւ բարքերի մասին:

աղատուում է եւ դառնում Վենետիկ, ուր եւ վախճանում է 1324ին (էջ 29—30):

Պատմագիրները բացի իր բազմակողմանի, ճշգրիտ եւ սրամիտ նկարագրութիւններից մի ուրիշ մեծ արդիւնք են վերագրում Մարկո Պոլոյին, այն է որ նա՝ շնորհիւ թաթար խանի վրայ ունեցած ազդեցութեան կարողացել է համոզել, որ սա չմիանայ մասմեւտական Մարակինոսներին Սազակիրների դէմ, որ եթէ պատահէր, անշուշտ մեծապէս պիտի դժուարացնէր այն վերջինների գործունէութիւնը Ս. Երկրում եւ շրջակայքում:

Ռուբինեանների անկումից յետոյ Այասն էլ կորցրեց իր գոյութեան իրաւունքը: Առուտուրը եւ նաւագնացութիւնը տեղափոխուեցան խորշի միւս եզերքն, Ալեքսանդրէտ: Այսպէս դարձաւ մի խեղճուկ աննշան դեղ, ճահճային վայրում, Ջիհոն դետի բերանի վրայ, Դէօրա Եօլի մօտ:

(Շարունակելի:)

ՍԱՐՈՒՆՍՆ



ՍԻՄԷՈՆ ԳՊՐԻ ԼԵՀԸՑԻՈՑ
ՌՈՂԵԳՐՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՌՈՂԵԳՐՈՒԹԵԱՆ Ի ԼՎՈՎԵ Ի Կ. ՊՈՒԻՍ, Ի ՀՌՈՍ, Ի ՄՈՒՇ ԵՒ ՅԵՐՈՒՍԱԼԵՄ ՅԱՄՆ 1608—1619

(Շարունակութիւն:)

12. ԵՐՈՒՍԱԼԵՄ

ԺԱՄԱՆՈՒՄՆ

Անտի տվի դձիւ աղքատի մի ծերունի: Եւ ես մինչ ի քաղաքն հեռիտոս գնացի: Կայ սահմանք զի յորժամ մերձ լինին սրբոյ Երուսաղէմայ ուխտաւորքն՝ առաջնորդն մարդիկ ուղէ դէմ նոցա. թէ կան եպիսկոպոսք, վարդապետք՝ եւ նա ուղէ եպիսկոպոսք եւ վարդապետք. եւ թէ միայն քահանայք եւ աշխարհականք են, առաքէ դմեծ թարձիմանն եւ քահանայք դէմ նոցա: Իսկ ամենայն ուխտ եկեղեցւոյն դարդարին եւ զգետաւորին՝ եպիսկոպոսք, վարդապետք, քահանայք. եւ ամբարձարք եւ խաչալամով, ինկոք եւ մոմե-

4 մարդիք: — 8 դարձիման: — 10 եպիսկոպոս:

ղինօք դէմ գնան: Եւ որչափ քահանայ կայ եւ կարգաւոր՝ ամէնին շուրջառ տան եւ շապիկ. 15 եւ մտանեն քաղաքն շարականաւ ցնծութեամբ եւ երգովք հոգեւորօք. եւ իրբեւ գան ի դուռն եկեղեցոյն՝ գնայ ընդ առաջ պատրիարքն եւ մուծանէ գնոսս յեկեղեցին. եւ երկրպագեալ անդ սեղանոյն՝ ապա զաջն ողջունեն առաջ- 20 նորդին: Եւ նա բաժանէ նոցա զօթեւանս ըստ պատշաճի, ոմանց առանձին մի օտայ տայ եւ այլոցն երկու-իրեքին մի: Նոյնպէս եւ զբաստիցն:

Ս. ՅԱՎՈՒՐ

Եւ կայ ի Ս ու ր բ ն Յ ա կ ո ր Յ Կ Ն տուն 25 վիմաչէն եւ քարուկիր: Եւ զոտ աւազ Եկեղեցուն երկու փոքր եկեղեցի ալ՝ Ս ու ր բ թ ո ր ո ս եւ Ս ու ր բ Ա ու ա ք ե ա լ: Ունի երկու մեծ ախոս, որ հաղարական ձի կու մէկին. իրեք պաղչայ՝ ջաղաքքն մէջ ձիու: 30 Եւ առաջնորդին օթեւանքն եւ նստատեղն մեծ եւ բազում. մուտպախն, հացտունն, մառանն: Հարեղայից թաղն երկու տակ է տներն՝ ներքնատուն եւ վերնատուն: Ունի քառսուն հորջրի. եւ բոլորն շուրջանակի քարէ պարիսպք, 35 բարձր եւ լայն. եւ մեծ դուռ երկաթի որպէս քաղքի. եւ դռան վերեւն երեքյարկեան դարպաս, կաթողիկոսարան: Եւ ամէն փողոց անուն մի ունի:

Զոր մեծ կարգ եւ սահման տեսի ես յայն- 40 ժամ անդ, ժամն եւ արտաքս: Զի ունէր ժեհ հարեղայ, որ ամէն օր անխափան ամենայն եկեղեցիս ժամ կ'առնեն. երկու վարդապետ, իրեք եպիսկոպոս, լաւ վարպետ մի ժամասաց: Ունէր խարիճիք, որ ցորեկն նստէին եւ 45 դիւերն փակէին, բանալին Պարոնտէրի տային. էթմէքէիք, աչիք, ջաղցպանք, եաղըճիք, մոմճիք, երկու քիւրչի, մտպախչի, թէրգիք, ոսկէրիչ, թէպէհչիք, անտեսք՝ միմն զինոյն վրայ եւ մին կերակրոյն: Ունէր եւ ժո- 50 զորս առաքէր օտար քաղաքն Հայոց. երկու լուսարար, վեց թարձիման: Զոր անխափան կատարէր ժամակարգութիւն, սաղմոս եւ երգ եւ պատարագ. զի ամէն օր մէջ դիւերի 55 յառնէին եւ այնպէս տքնութեամբ հակէին յերկոյց մինչեւ ի լոյս. ամէն օր ութ կանոն՝ ամենայն քահանայ. եւ բոլոր տարին չորսպաք. երկու օրն անգամ մի ճաշակէին եւ զայն բանջար կամ լոկ թարխանայ. իսկ շաբաթ եւ 60

15 շուրջառ... շապիկք: — 18 պատրիարքն: — 22 տա: — 30 շաղաչքն: — 47 ջաղջպանք: — 56 աննէին: